Հավելված
ՀՀ կառավարության 2015 թ.
մարտի 10-ի նիստի N 11
արձանագրային որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՍՓՅՈՒՌՔ» ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ

I. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Աշխարհասփյուռ հայության առջև այսօր ծառացած է հայապահպանության գերխնդիրը: Հեռու լինելով հայրենիքից՝ գոյատևման պայքարում հայը հաճախ կորցնում է իր ազգային նկարագիրը, իր լեզուն, հեռանում է ազգային արմատներից, ավանդույթներից, սովորույթներից, դադարում է կրել դարերով ստեղծված հայկական մշակութային արժեքները: Տեղական լեզուների ազդեցության հետևանքով խաթարված է լեզվական միասնականությունը: Նոր սերնդի շարքերում նվազում է հայախոսների քանակը:

Հայոց լեզվի մեջ օտար ազդեցությունների ներթափանցումը օտար բառերի գործածությունը ուղղակիորեն տանում է հայոց լեզվի աստիճանական քայքայման:

Սփյուռքահայության ազգային ինքնության թուլացումն այսօր, դժբախտաբար, իրողություն է և դարձել է սպառնալիք Հայաստանի և ողջ հայության համար: Ինքնության կորուստն սկսվում է լեզվի մոռացությունից:

Հայերեն, առանձնապես՝ արևելահայերեն սովորելու, խոսակցական լեզվին տիրապետելու մեծ խնդիր ունեն Հայաստանում հաստատված հայրենադարձների ընտանիքները: Հայաստանյան դպրոցներում, հատկապես, միջին և բարձր դասարաններից տեղափոխված հայրենադարձված երեխաները դժվարություններ են ունենում առարկայական ծրագրերը յուրացնելիս, քանի որ նրանց հայերենի իմացությունը կամ շատ թույլ է, կամ՝ չգիտեն հայերեն գրել, կարդալ, իսկ առանձին խմբեր դպրոցներում չեն ստեղծվում այդ երեխաների լեզվական դժվարությունները հաղթահարելու համար:

Լեզվական իմացության անբավարար կամ իսպառ բացակայության խնդրին են առնչվում սփյուռքահայ դիմորդները՝ Հայաստանի բուհեր ընդունվելիս և ուսանելու տարիներին, քանի որ լեզվական իմացության ոչ բավարար մակարդակը թույլ չի տալիս հաղթահարել մայրենի լեզվի գնահատման շեմը քննական շրջանում, իսկ ընդունվելու դեպքում՝ ուսումնառության ժամանակ դյուրությամբ յուրացնել ծրագրերը:

Վերջին տարիներին, հատկապես, ամռան ամիսներին մեծաթիվ սփյուռքահայեր, առանձին երիտասարդական խմբեր են այցելում Հայաստան՝ շրջագայության, հարազատներին տեսակցելու, բազմաթիվ միջոցառումների, ծրագրերի մասնակցելու և այլ նպատակներով: Նրանցից շատերի համար այդ ժամանակահատվածը հայերեն սովորելու համար, թերևս, ամենանպատակահարմարն է:

Սփյուռքում ազգային հոգևոր-մշակութային արժեքներին չտիրապետելուն, հայեցի լեզվամտածողությունից հեռանալուն մեծապես նպաստում են նաև հայերենով հայրենակիցների հետ շփվելու հնարավորությունների սահմանափակումը, միջավայրի բացակայությունը, ազգային շատ արժեքներին, արվեստին, մշակույթին հաղորդակից չլինելը: Պակասում են կամ չկան համապատասխան մասնագետներ, եղածների մասնագիտական պատրաստվածությունն էլ խիստ կարիք ունի նորացնելու իր

մասնագիտական գիտելիքները, վերապատրաստվելու-վերարտակավորվելու հենց Հայաստանում և պատրաստ լինելու իր բնակավայրում հայ երեխաներին, երիտասարդներին սովորեցնելու հայ մշակույթը, ազգային երգ-երաժշտությունը, պարը, սեր առաջացնելու դեպի ազգային արժեքները, ստեղծելու համայնքներում խմբեր-խմբակներ, աշխուժացնեու հայ հանրության մշակութային կյանքը, դրանով իսկ նպաստելու ազգային գիտակցության վերածննդին, հայ ինքնության ձևավորմանն ու արմատավորմանը հայ սերունդների մոտ: Այդ մասնագետները կարող ուժ կդառնան համայնքներում համահայկական մշակութային, այլ միջոցառումներին, փառատոներին հայկական համույթների մասնակցության ապահովման գործում: Այս ամենով հանդերձ, հայոց լեզվի, երգի, պարի, արվեստի ուսուցիչները հայկական մշակույթի տարածողներն են օտար երկրում և մեծ դերակատարություն ունեն տեղում հայ ազգաբնակչության հանդեպ բարյացկամ վերաբերմունքի ձևավորման հարցում, ընդհանրապես՝ հայ ժողովրդի դրական վարկանիշն ամրակայելու ուղղությամբ:

Սփյուռքի բազմաթիվ հայաշատ բնակավայրերում չկան կազմավորված համայնքային կառույցներ, գործող համայնքներում էլ նկատվում է առաջնորդների միջին տարիքի աճ: Քիչ թվով սփյուռքահայ երիտասարդներ են ներգրավված համայնքային կառույցներում: Երիտասարդ առաջնորդների պակաս կա, քիչ են հայկական երիտասարդական կազմակերպությունները, համայնքների ինքնակազմակերպման, համայնքային գործի արհեստավարժ կազմակերպման խիստ կարիք կա, հետևաբար, հարկավոր են համայնքային գործի համար տեսական ու գործնական գիտելիքներով պատրաստված կազմակերպիչներ, ում համար կարևորվում է հայաստանյան դասընթացների կազմակերպումը:

Սփյուռքի մասնագիտական ներուժը ևս ազգային արժեհամակարգի համալիրով իր մասնագիտական կարողությունները լրացնելու, հայրենիքում ձևավորված ավանդական համապատասխան մասնագիտական դպրոց անցնելու, իր կրթությանն ու մասնագիտությանը ազգային բովանդակություն հաղորդելու պահանջ ունի: Դա, թերևս, ամենից առաջ վերաբերում է Սփյուռքի հայ լրագրողներին: Սփյուռքի հայկական ԶԼՄ-ին այսօր անհրաժեշտ են որակյալ մասնագետներ, և երիտասարդ հայ լրագրողները Հայաստանում կարող են վերապատրաստվել կամ խորացնել իրենց մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, հատկապես, ազգային, սփյուռքյան խնդիրների շուրջ:

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ, ՁԵՎԱՉԱՓԸ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Սփյուռքի հայ համայնքներում ազգային ինքնության պահպանմանն ու զորացմանը, երիտասարդների շրջանում հայոց լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը, Սփյուռքի ԶԼՄ-երի գործունեությանը, ինչպես նաև համայնքների ինքնակազմակերպմանն աջակցության նպատակով ՀՀ սփյուռքի նախարարությունը Երևանի պետական համալսարանի հետ համատեղ իրականացնում է «Սփյուռք» ամառային դպրոց» - 2015 ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր):

1. Ծրագրի շրջանակներում դասընթացներն իրականացվում են հուլիս ամսին՝ ըստ վեց ուղղությունների.

1) հայոց լեզվի արագացված ուսուցում, որն իրականացվում է լեզվական իմացության երեք մակարդակով (լեզվին չտիրապետողներ, ցածր և միջին իմացություն) խմբերում՝ արևելահայերեն ու արևմտահայերեն, խմբերը ձևավորվում են նաև տարածաշրջանային, բնակության երկրի լեզվական առանձնահատկությունների հիմքով:

Դասընթացներում դասավանդում են հանրապետության և սփյուռքի հայտնի լեզվաբան-մանկավարժներ: Մայրենիի ուսուցման ընթացքում զուգակցվում են տեսական-գործնական պարապմունքները, սովորողները հնարավորություն են ունենում տարբեր միջավայրերում մայրենի լեզվով հաղորդակցվելու, լեզվի ուսուցման ժամանակակից տեխնիկական միջոցներից օգտվելու: Դասընթացները տևում են երեք շաբաթ, մասնակցում են առանց տարիքային սահմանափակման:

2) Սփյուռքահայ ուսուցիչների, կրթօջախների տնօրենների, կրթական գործի կազմակերպիչների վերապատրաստում, որի դասընթացներին մասնակցում են Սփյուռքի ազգային վարժարանների, ամենօրյա և մեկօրյա դպրոցների տնօրեններ, ուսուցիչներ, կրթական գործի կազմակերպիչներ: Ծրագրի ընթացքում նախապատվություն է տրվում գործնական պարապմունքներին, ուսումնական, արտադասարանական և դաստիարակչական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ փորձի փոխանակմանը, հայաստանյան կրթօջախների մասնագետների և մանկավարժների հետ համատեղ ծրագրերի մշակմանը: Ծրագիրն իրականացվում է Երևանի պետական համալսարանի, հանրապետության փորձառու դասախոսների, մանկավարժների մասնակցությամբ: Քննարկվում են Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման շրջանակներում, համայնքներում հայապահպանական ծրագրերի իրականացման գործում սփյուռքի կրթօջախների դերակատարության բարձրացման հարցեր:

3) ազգային երգի, պարի խմբավարների, պարուսույցների վարպետության դասընթացներ, որի նպատակն է սփյուռքի երգչախմբերի խմբավարներին, երաժշտության ուսուցիչներին, պարուսույցներին ծանոթացնելը հայկական երգերի ու պարերի յուրահատկությանը, գաղափարական ուղղվածությանը, պատմական նշանակությանը, մշակման եղանակներին, կառուցվածքային դասակարգմանը և ավանդաբար ժառանգված ժողովրդական պարանմուշներին, երգ-երաժշտությանը: Դասընթացները վարում են հանրապետության ճանաչված երաժշտագետներ, պարուսույցներ:

4) սփյուռքահայ երիտասարդ առաջնորդների դասընթաց, որին մասնակցում են Սփյուռքի երիտասարդական կազմակերպությունների 18-30 տարեկան ղեկավարներ և հայկական կառույցների երիտասարդ ներկայացուցիչներ:

Դասընթացի նպատակն է՝

- սփյուռքի հայ երիտասարդ առաջնորդների համար ստեղծել փոխադարձ ճանաչողության դաշտ, կապել հայրենիքին, ներքին և արտաքին քաղաքականության առանձնահատկություններին, կազմակերպել հանդիպումներ պետական իշխանության համակարգի ներկայացուցիչների, ՀԼՄ-ների հետ, մշակել հետագա համագործակցության ձևեր և միջոցներ,

- քննարկել Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հեռանկարներն ու ձևերը՝ հայապահպանության, հայ համայնքներում ազգային ինքնության պահպանման ու զարգացման, ձուլման դեմ պայքարի հարցերը,

- համատեղ քննարկումների, երկխոսության արդյունքում առաջարկել հայկական համայնքներում արդյունավետ կառավարման կառուցակարգերի ներդրման, երիտասարդների ակտիվ ներգրավման ձևեր և միջոցներ, ստեղծել նրանց ակտիվացման, հայրենիքի հետ սերտ կապերի հաստատման համար ամուր հիմքեր:

5) Սփյուռքի լրագրողների դասընթաց, որի ընթացքում վերապատրաստվում են Սփյուռքի ինչպես հայկական ԶԼՄ-ում աշխատող, այնպես էլ համայնքների կողմից երաշխավորված լրագրողներ, ովքեր պատրաստվում են աշխատել տվյալ համայնքի ԶԼՄ-ում: Ծրագիրը հիմնականում իրականացվում է «Ցեղասպանության 100-րդ տարելիցը» խորագրով, դասընթացներին Սփյուռքի լրագրողները ստանում են տեսական և գործնական գիտելիքներ Հայաստանի և Սփյուռքի ճանաչված ու բազմափորձ լրագրողներից, պետական-հասարակական գործիչներից, ծանոթանում են Հայաստանի ներքին և արտաքին քաղաքական հիմնախնդիրներին, ներկա են գտնվում համահայկական նշանակության խնդիրներին նվիրված դասախոսությունների, գործնական պարապմունքեր են կազմակերպվում հայաստանյան լրատվամիջոների խմբագրություններում:

6) Սփյուռքի համայնքային գործի կազմակերպիչների դասընթաց, որի նպատակն է՝ աջակցել Սփյուռքի հայկական, համայնքային կառույցների կայացմանը, հայապահպանական ծրագրերի ակտիվացմանը, համայնքային գործի կազմակերպիչների պատրաստվածության դերի բարձրացմանը, Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման, համայնքների ինքնակառավարման գործընթացների, հայ ինքնության պահպանման, ՀՀ սփյուռքի նախարարության ծրագրերի իրականացման ուղղությամբ տարվող աշխատանքներին ակտիվ մասնակցության ապահովմանը:

Սփյուռքյան համայնքների աշխատակիցների համար կազմակերպվող դասընթացին մասնակցում են համայնքային կազմակերպությունների ղեկավարները, խորհուրդների անդամները, համայնքներում առնվազն մեկ տարվա աշխատանքային փորձ ունեցող աշխատակիցները, այդ թվում՝ ակտիվ համայնքային կյանքում ներգրավված երիտասարդները:

Դասընթացների մասնակիցների համար տեսական ու գործնական պարապմունքներից բացի կազմակերպվում են մշակութային միջոցառումներ, այցելություններ Հայաստանի պատմական ու տեսարժան վայրեր, հանդիպումներ պետական, հասարակական, մշակույթի գործիչների հետ:

Բոլոր դասընթացներն անցկացվում են հայերենով, լեզվի ուսուցումը՝ նաև տարբերակված, բնակության երկրի լեզվական հիմքով:

Դասընթացների անցկացման վայրը՝ Երևան:

III. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Սփյուռքում հայապահպանության, հայ ինքնության պահպանման, օտար միջավայրում երիտասարդ սերնդի ազգային ինքնագիտակցության ձևավորման գործում կարևորագույն դերակատարությունը կադրերինն է, համայնքները մասնագետներով ապահովելը, որոնց գործունեությամբ են լուծվելու ներքոհիշյալ հիմնախնդիրները.

-սփյուռքահայության ազգային ինքնության թուլացումը, լեզվի մոռացությունը որպես իրողություն, հայեցի լեզվական մտածողության կորուստը որպես ուծացման վտանգ,

-սփյուռքահայության ստվար զանգվածների մոտ հայերենի տառաճանաչության բացակայություն,

-սփյուռքահայերի լեզվական իմացության, խոսակցական հայերենի կարողությունների բացակայություն, շփման հնարավորությունների սահմանափակ կարողություններ,

- հայերենի, հայագիտական այլ առարկաների, ազգային երգի-պարի ուսուցիչների բացակայություն կամ պակաս, մասնագիտական պատրաստվածության կատարելագործման խնդիր,

-սփյուռքահայ երիտասարդների՝ հայոց լեզվի անբավարար իմացության պատճառով հայաստանյան բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության հետ կապված խնդիր,

-Սփյուռքի համար հույժ կարևորություն ներկայացնող և սփյուռքահայ երիտասարդության հետ համակարգված աշխատանքի, նրանց միջև շփումների, կապերի ստեղծման անհրաժեշտություն,

-Սփյուռքի հայ համայնքներում երիտասարդների ուժերի կազմակերպման, զարգացման ու համախմբման խնդիր, սփյուռքահայ երիտասարդների մոտ առաջնորդի, համայնքների ղեկավարման հմտությունների ձևավորման, մասնագիտական ոչ բավարար պատրաստվածության հետևանքով համայնքների ներկա ղեկավարներին փոխարինելու հետ կապված խնդիր,

-Սփյուռքի հայկական ՀԼՄ-ին որակյալ, ազգային խնդիրների առաջնահերթություններին տիրապետող երիտասարդ հայ մասնագետներով ապահովելու խնդիր:

Համայնքների ինքնակազմակերպման, նորերի ստեղծման, հայապահպանական ծրագրերի իրականացման, Հայաստան – Սփյուռք գործակցությանը մասնակցության խնդիրները լուծելու համար համայնքները խիստ կարիք ունեն արհեստավարժ, համայնքային գործին, համազգային խնդիրներին ու առաջնահերթություններին գիտակ աշխատողների, համայնքային գործի կազմակերպիչների, ովքեր կարող են բարձրացնել իրենց տեսական ու գործնական պատրաստվածության մակարդակը Հայաստանում կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին:

IV. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի վեց դասընթացներին մասնակցում են հայոց լեզու սովորել ցանկացող շուրջ 250 սփյուռքահայեր՝ ուսուցիչներ, կրթական գործի կազմակերպիչներ ու ղեկավարներ, երգի ու պարի խմբավարներ, պարուսույցներ, երիտասարդ առաջնորդներ, հայկական ՀԼՄ-երի լրագրողներ, համայնքային գործի կազմակերպիչներ:

Ծրագրի իրականացումը զգալիորեն կնպաստի

- Սփյուռքի ուծացմանը դիմակայելուն և լեզվամշակութային ինքնության կորստի կանխմանը, համայնքներում հայ ազգային ինքնության միասնական բարենպաստ միջավայրի ձևավորմանն ու զարգացմանը, հայապահպանական գործի արդյունավետության բարձրացմանը,

- Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանը, այլ պետություններում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը, Հայաստանից դուրս բնակվող հայերի շրջանում հայոց լեզվի պահպանմանն ու տարածմանը, հայերենի իմացության մակարդակի բարձրացմանը, արևելահայերենի և արևմտահայերենի մերձեցմանը,

- Հայաստանակենտրոն գաղափարի առարկայացմանը, Հայաստանի հետ սփյուռքահայության, միջհամայնքային կապերի ամրապնդմանը և զարգացմանը,

- Սփյուռքի համար մասնագետների պատրաստման և վերապատրաստման համակարգի շարունակական կատարելագործմանը,
- նոր մոտեցումների և լուծումների մշակմանն ու իրականացմանն ուղղված Սփյուռքի հայապահպանությանը, հայության տարբեր հատվածների, տարածաշրջանների յուրաքանչյուր համայնքի կարիքների բավարարմանը, նրանց ներուժի ներառմանը՝ հայրենական կառավարության համապատասխան ծրագրերում, տարբեր երկրների համայնքներում կառույցներում, կազմակերպություններում ներգրավված մասնագետների, կադրերի կարողությունների բազմապատկմանը և ուժեղացման, մասնագիտորեն հայկական սփյուռքը կազմակերպելու գործընթացներին:

Ծրագիրը սփյուռքահայության համար դառնում է հայերենի ուսուցման, մասնագետների վերապատրաստման հաստատուն կենտրոն Հայաստանում:

V. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Ծրագիրը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրի շրջանակներում իրականացվող «Սփյուռք» ամառային դպրոցի կազմակերպում ծրագրի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին: